



ԱՐՁԱՆԱԳՈՐԾ ԱՅԾԵՄՆԻԿ ՈՒՐԱՐՏՈՒ ՔՈԶԱՐԵԱՆ

Կովկասահայ առաջին արձանագործուհին, որ իր ստեղծագործութեան եօթնամեայ ժամանակաշրջանում քանդակագործութեան կուլտուրայի ասպարիզում արել է զգալի նուաճումներ եւ շնորհիւ իր վարպետ մուրճի՝ այսօր ունի իր ուրոյն տեղը Երեւանի արուեստագէտների շարքում:

Երեւանում է գտնուում նրա արհեստանոցը: Այնտեղ էլ նա այսօր ապրում է եւ ստեղծագործում:

Մտէք նրա արուեստանոցը եւ դիտեցէք նրա կերտած արձանները: Այդ քանդակները պատկերում են ձեզ նրա գեղարուեստական գործունէութեան անցած ուղին, նրա ստեղծա-



«Շիմի», արձան. 1927, Երևան, գործ՝ տիկին Այծ. Ուր. Քոչարեանի :

գործական բովանդակությունը:

Այդ արձանների ետևում ցույցանում է գեղարուեստական լուրջ կրթություն ստացած արձանագործուհին, որն իր քանդակներով կարողանում է վարակել ձեզ, յոյզեր առաջացնել ձեր մէջ, իշխել ձեր սրտի, հոգու եւ զգացումների վրայ: Այդպէս էլ պիտի լինի իսկական արուեստագէտը:

Սակայն, ի՞նչ է քանդակել Ուրարտուն, որո՞նք են նրա մուրճի, ստեղծագործութեան մօտիվները:

Հասարակ ժողովրդի տիպիկը, աշխատանքի հերոսները, կեանքից արհամարհուածները («Անապաստանը»), կուլտուրական ուժե-

րը — ահա Ուրարտուի ստեղծագործութեան գլխաւոր աղբիւրները: Նա քանդակել է մի շարք դիմագծեր, կերտել է կիսանդրիներ, դուխներ կամ ամբողջական մարմիններ:

Այդ քանդակները դրաւիչ են նախ եւ առաջ իրենց պարզութեամբ: Այնքան են պարզ, որ այդ պարզութեան մէջ դուք զգում էք նրա արուեստի խորությունը: Պարզութիւնն ու խորութիւնը Ուրարտուի արուեստում անխզելի են: Դա իւրաքանչիւր գրողի եւ արեւեստագէտի համար չափազանց դրական գիծ է:

Քանդակագործը մեծ է, երբ նա տալիս է իր կերտած տիպի ոչ միայն արտաքին պատկերը, դէմքի պծագրութիւնը, այլ եւ դրսեւորում է նրա հոգեկան աշխարհը, ներքին էութե-

թիւնը, նրա բնորոշ, ատանձնայատուկ նկարագիրը:

Ուրարտուն կանդնած է այդ դժի վրայ: Ահա թէ ինչո՞ւ նրա կերտած արձաններում զուք տեսնում էք տիպի ներքին բովանդակութեան, արտաքին ձևաւորման եւ մատերիալի ներդաշնակութիւն: Դա արուեստի ասպարիզում, անկասկած, դժուար, բայց խոշոր նուաճում է: Այդպէս են Ուրարտուի «Ախալցխացի կիներ», «Բանուորական թղթակիցը», «Աւ. Իսահակեան»ը: Այդ արձանները կերտելիս Ուրարտուն աշխատել է տալ ոչ միայն նրանց դէմքերի տիպիկ, բնորոշ դժերը, այլ եւ ներքին էութիւնը, հոգեկան աշխարհը: Այդ կիսանդրիներում նա տալիս է այն բոլոր ձևերն ու դժերը, որոնք արտայայտում են մարդը:

Ուրարտուի լաւագոյն արձաններից մէկը

կանդնած է այսօր Երեւանում, Կոմունալնիկների ծառայարդ մեծ այգում: Դա «Առա՛ջ»ն է:

Երկրի շինարարութեան նուիրում մի բանուոր է դա, որ իր յաղթ բազուկներով շրջում է անիւր: Իր յաղթական կեցուածքով եւ խրոխտ արտայայտութեամբ նա ձեռք համակում է: Ասես աշխատասիրութեան, նուիրումութեան խորհրդանշանն է, որի դէմքի վրայ կարդում էք զուք, ե՛ւ վճռականութիւն ե՛ւ կամք: Այդ քանդակում շեշտուած է բանուորի թէ՛ անհատականութիւնը եւ թէ՛ նրա աշխատանքի աննկուն ոգին:

Չափազանց յուզիչ է «Անապատանը»: Չբաւորութիւնը, աղքատութիւնը եւ խոր թախիծը դրոշմուած են փոքրիկ թափառաշրջիկի դէմքի վրայ: Յնցոտիների մէջ փաթաթուած



Ըմբիշ Սալի-Սիւլէյմանի, կենդանագիր (ֆարէ) 1925.
Յուցադրուած է Մոսկուա:



Ս. Շահումեանի յուշարձանի ծրագիրը, 1928ի մրցմանը առաջին հռչակումը.
Գործ՝ տիկին Այծ. Ուր. Քոչարեանի:

անմեղ մանուկը զձագրուած է ծերունու դէմ-
քի արտայայտութեամբ:

Ուրարտու քանդակել է նաեւ նոր կեանք
ու կենցաղ կերտող նոր մարդը՝ հարուածա-
յինը: «Շախտեր» — ահա նրա աշխատանքի
հերոսը, որի պարզ եւ խոհուն դէմքի վրայ
դուք կարդում էք պատասխանատուութեան
զխտակցութիւնը: Արձանագործը կարողացել է
նրա դէմքի վրայ դրոշմել հարուածայինի
անձնուիրութիւնը եւ լրջութիւնը: Նրա անպա-

ճոյճ արտաքինի տակ դուք տեսնում էք աշ-
խատանքի բարեխիղճ հերոսին: Այսպէս են եւ
նրա հասարակ ժողովրդի խաւերից վերցրած
միւս տիպերը:

Ի՞նչ են ասում այդ բոլոր քանդակները:
Հէնց այն, որ Ուրարտուն ամենասերտ կերպով
կապուած է երկրի եւ ստեղծագործող ժողո-
վրդի հետ: Այդ ժողովրդից էլ նա վերցնում
է իր մուրճի, իր քանդակի նիւթերը:

Երկրի ժողովուրդը,՝ զինամիկան, նոր



«Առաջ», պրոնգէ արձան, գործ տիկին Այծ. Ուր. Քոչարեանի, Երեւան, 1927 :

Թէ՛մաները, տիպերն այսօր իրենց արտացոլումն են գտնում զրեթէ Հայաստանի բոլոր արուեստագէտների աշխատանքներում : Ահա թէ ինչո՛ւ նրանց արուեստն առողջ է, կենդանի եւ գունեղ :

Դա ոչալիզմի ուղին է, որ հերոսական է

իր բնոյթով, ձևով եւ բովանդակութեամբ :

Ուրարտուն կանգնած է հերոսական ոչալիզմի դրօշին տակ եւ այդ հաստատուն ուղիով անսկանդ փայլում է զէպի առաջ :

Թիֆլիս

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

6 Ապր. 1933